Հասարակութիւն Նոստապատ գեղջ · 15 —
Հասարակութիւն Թոփուլ գ՚ղջ · · 18 —
Խանում Բակըրեան՝ Զօրանց Բաղալ Շահնազարեանցի · · · · · · · · · · 6 —
Որդակից Բ. Շահնազարեանցի՝ Նազում Շահնազարեանց · · · · · · · · · · 5 —
Մահտեսի Բունիաթ Մանասէրեանց · 2 —
Հասարակութիւն Հաջիվար գեղջ · 8 —
Հասարակութիւն Նարումեայ գեղջ · 16 —
Հասարակութիւն Դուլըբէկ և Քարխմ-բէկ գեղջ · · · · · · · · · · · · 7 —
Հասարակութիւն Շխահմուտ գեղջ · 20 —
Հասարակութիւն Խալլու գեղջ · · · 6 —
Հասարակութիւն Քուլթափա գեղջ · 15 —
Յարութիւն Սարգսեանց Քիւլթափացի 3 —
Հասարակութիւն Ուզունօբայ գեղջ · 5 —
Հասարակութիւն Նազարապատ գ. · 8 —
Հասարակութիւն Ջնարերդ գեղջ · · 10 —
Հասարակութիւն Ճահուկ գեղջ · · · 15 —
Հասարակութիւն Խալխալ գեղջ · · · 10 —
Հասարակութիւն Ալագեօղ Մաղրայ գեղջ · · · · · · · · · · · · · · · · 8 —
Հասարակութիւն Ղարաքարան գեղջ 5 —
Հասարակութիւն Նորս-Մաղրայ գեղջ 10 —
Հասարակութիւն Կժաձոր գեղջ · · · 6 —
Հասարակութիւն Արճնջ գեղջ · · · · 6 —
Հասարակութիւն Մեծօպ գեղջ · · · 7 —
Հասարակութիւն Սուլթանբէկ գեղջ 10 —
Հասարակութիւն Սեա գեղջ · · · · · 6 —
Հասարակութիւն Մարտիրոս գեղջ · 10 —
Հասարակութիւն Գնտեվազ գեղջ · · 3 —
Հասարակութիւն Դուշչի գեղջ · · · 5 —
Հասարակութիւն Փաշալու գեղջ · · 9 —
Հասարակութիւն Փօռ գեղջ · · · · · 10 —
Հասարակութիւն Աղատակ գեղջ · · 9 —
Հասարակութիւն Մալիչկեայ գեղջ · · 12 —
Հասարակութիւն Օրթաքեանդ գեղջ 5 —
Հասարակութիւն Քէշիշքեանդ գեղջ 12 —
Հասարակութիւն Պաշ քեանդ գեղջ 6 —
Հասարակութիւն Երթափուն գեղջ · 5 —
Հասարակութիւնք Քարագլուխ և Թաւաթուն գիւղօրէից · · · · · · · · 6 —
Հասարակութիւն Հասան քեանդայ · 4 —
Հասարակութիւն Դօյթուր գեղջ · · 8 —
Հասարակութիւն Աղաւնաձոր գեղջ · 6 —
Հասարակութիւն Մխնա գեղջ · · · · 5 —
Հասարակութիւն Երփին գեղջ · · · · 8 —
Հասարակութիւն Արփայ գեղջ · · · 8 —
Հասարակութիւն Խաչիկ գեղջ · · · · 15 —
Հասարակութիւն Գնեշէկ գեղջ · · · 5 —
Հասարակութիւն Այեար գեղջ · · · 3 —
Հասարակութիւն Ենկիջայ գեղջ · · · 2 —
Հասարակութիւն Կորատիղ գեղջ · · 10 —
Հասարակութիւն Ալմալու գեղջ · · · 9 —
Հասարակութիւն Գոմէր գեղջ · · · · 10 —
Հասարակութիւն Արաղին գեղջ · · · 4 —

---

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Շամախւոյ թեմին Հոգևոր Տեսուչ Սրբազան Անդրէաս Արքեպիսկոպոսը Շամախի քաղաքը իւր մուտ գործած օրէն հետէ սկսաւ նկատել և տեղական Հայոց ուսումնարանի ներքին վիճակը ըստ ուսումնական և ըստ նիւթական մասին։ Տեսանելով այն, և բաղդատելով ըստ նիւթականին ուսումնական մասն՝ նշանակութեան մէջ դրաւ։ Ի հարկէ, սորանով խնացվում են ազգասիրական ոգով աշխատողների — յարգոյ հոգաբարձուաց խրախուսական միջոցները և ուսուցչաց ջանքը։

Սակայն, տեսանելով մի կողմից թէ մի չնչին գումարով աւելի յառաջադիմութեան քայլեր չպիտի ունենայ խեղճ ուսումնարանը և չպիտի հասնի կատարելապէս իւր նպատակին, քանի որ հաստատապէս և արդիւնաւոր աղբիւրներ չունի ուրիշ քաղաքաց ուսումնարանների պէս, և միւս կողմից բնակիչների թշուառապատում վիճակը՝ պատճառած յաճախ և սաստիկ երկրաշարժութիւններից և առևտրական ձախողակի ընթացքներից, ուստի անցեալ 1869 թուականում բացեց մի թեթև և դիւրին եղանակ ժողովրդեան ձեռնտու և նպաստամատոյց լինելու յիշեալ դպրոցին, որով ինքեանք աւելի ծանրութիւն չզգալով կարողանան դէթ գոյութեան մէջ պահել իրանց ուսումնարանը — իրանց լուսաւորութեան աղբիւրը։ Այս պատճառի սահմանվեցաւ բաժանորդագրութիւն 'ի ձեռն Նորին Սրբազնութեան, զոր ունիմ յիշել 'ի վերջոյ համառօտապէս։

Քաջայոյս եմ, թէ Շամախւոյ Հայ հասարակու-

թիւնը չնայելով իրանց անցեալ և ներկայ անյաջող դիպուածներուն, այսպիսի դիւրին միջոցներով կարող են փոյթեռանդն նուիրատուութեամբ առելի յառաջադէմ կացուցանել ուսումնարանի ընթացքը պտակելով Սրբազան Հօր իրանց վերայ ունեցած յոյսը։ Եւ անտարակոյս համոզված պիտի լինին, որ սորա նման հեշտ և սակաւամասն տուրքերով ժամանակին կ՚մեծացնեն ուսումնարանի դրամական գումարաց քանակութիւնը, եթէ միայն անհրաժեշտ պարտականութեամբ շարունակեն իւրաքանչիւր տարի, մինչև մեծանայ գումարը, որոյ տոկոսեօք գո՛նէ ապրել կարողանայ ուսումնարանի գոյութիւնը։

Ո՛ր տեղ սիրով և միաբանութեամբ շղթայված են մարդիկ իրարու հետ, այնտեղ տարակոյս չկայ, թէ ամէն մի Ազգային գործ կունենայ յառաջադիմութեան հաւաստիք։ Եթէ ջրի շատ կաթիլներով մեծանում է ջուրը իւր սակաւ գոյութենից, կ՚մեծանայ ուրեմն և շատ փոքրիկ նուէրքներով սակաւ գումարը, միայն եթէ լինին անընդհատ։ Ի հարկէ, և Սոքա իրանց ապագայ օգուտը նախազգալով ամէն մի իրաց համար օգտաւէտ ձայնին տեղի կ՚տան սրտներուն մէջ, և չե՛ն խնայիլ ձգելու ըստ կարողութեան նուէրքներ Ազգային գանձանակի մէջ, որով իրանց հարազատ մանկունք պիտոյ է մի ժամանակ տգիտութեան գերութենից ազատված սփոփեն իրանց վշտացած սրտերը։

Ապագայն քննող և ապագային յուսով լցուն մարդիկը (ինչպէս Եւրոպայում և Ամերիկայում) տեսակ տեսակ բարեգործական ընկերութեան անուամբ փոքրիկ փոքրիկ աղբիւրներ բանալով մեծամեծ գումարներ են դիզում։ Սա լինում է համբերութենով և երկար տարիներու անվհատ ջանքերով։ Ո՛չ ոք չ՚կարծէ և չ՚զարմանայ, թէ այդպիսի մի գումար գոյացնելը շատ դժուարին է, ո՛չ. ուղ սիրոյ և միաբանութեան անհատ պտուղներովը կարելի է անշուշտ ձեռք բերել, թէ և փոքր ինչ ուշ։

Ցաւալի է և Շամախւոյ Հայ ժողովուրդից, որ պէտք է զրկուի ժամանակիս պահանջման համեմատ ուսուցութեան արժանաւոր այն հասարակաց խնդրոյն, որ կ՚վերաբերի իրանց օրիորդական ուսումնարանին, անտարակոյս լինելով, թէ՛ պատրաստելու է նա ողջախոհ, և զաւակաց բարոյապէս և ընտանապէս օգուտը և մեծար ճանաչող Աստուածպաշտութեամբ սնուած մայրեր։

Մատուցանելով ահա՛ ցանկալի Արարատ ամսագրոյ խմբագրութեանդ վերոյիշեալ բաժանորդագրութեան ցուցակը, կ՚յուսամ, որ դորա գեղեցիկ բովանդակութեան մէջ տեղի տալով և սորան, կ՚հաղորդէք մեր Ազգի սիրելի և բարեմիտ ընթերցողներին։

Ի 22 յունիսի 1869 ամի Հայազգի ժողովրդականք Շամախւոյ քաղաքիս հրաւիրվումեն Հոգևոր Տեառն Սրբազան Անդրէաս Արք Եպիսկոպոսէն՝ Հոգևոր—Ազգային դպրոցի դահլիճը, ուր սահմանվումէ այս բաժանորդագրութիւնը այսինչ կարգաւ՝ Ա. Ամէն ստորագրեալ բաժին պարտ է լինիլ ո՛չ պակաս քան երեք ռուբ. արծ. Բ. Ստորագրողներից ըստ կարողութեան՝ ով որքան բաժին կամենայ ընդունել, կարող է ստորագրել. Գ. Նշանակեալ գումարն իւրաքանչիւր ստորագրողի պէտք է դպրոցի Հոգաբարձուաց ձեռքով կամ կանխիկ վճարուի և կամ իւրաքանչիւր քառամսեկի վերջերում. Դ. Իւրաքանչիւր ստորագրող անձն կունենայ դպրոցի Հոգաբարձուներից ապահովագիր. Ե. Այս Կանոնադրութիւնը կ՚մնայ իրանց մէջ սուրբ և անխախտ. Ի հաստատութիւն որոյ ստորագրվումեն հետևեալ անձինք։

1) Աբրահամ բէկ Լալայեանց. 2) Պ. Մովսէս Ներսիսեանց. իւրաքանչիւրը քսան բաժին։

1) Յովհաննէս Քալանթարեանց հինգ բաժին։

1) Բալասի Օսմանցով. 2) Նիկողայ Կաճկաճեանց. 3) Սերգէյ Նազարեանց. 4) Պետրոս Տէր Մարկոսեանց. իւրաքանչիւրը չորս բաժին։

1) Յակոբ բէկ Գէօրգջայեանց. 2) Բաղդասար Նազարեանց. 3) Գէորգ Թումանեանց. 4) Մարտիրոս Միրզաբէկեանց. 5) Յակոբ Նիկիտեանց. 6) Հայրապետ բէկ Մարտանեանց. իւրաքանչիւրը երեք բաժին։

1) Տեառ. թեմին Հայոց Շամախւոյ Անդրէաս Արքեպիսկոպոս. 2) Մարտիրոս Նիաղեանց. 3) Աբրահամ Բախտամեանց. 4) Յովհաննէս Խալաֆեանց, 5) Յակոբ Պօղոսեանց. 6) Միքայէլ Աշուրեանց. 7) Գաբրիէլ Թումանեանց. 8) Սերգէյ Պօղոսեանց. 9) Գէորգ Տէր Յովհաննիսեանց. 10) Մովսէս Ռոստամեանց. 11) Միքայէլ Դարադաշեանց. 12) Կարապետ Տէր Սանխանեանց.

13) Թադէոս Եզանեանց. 14) Մկրտիչ Կանձանեանց. 15) Յովհաննէս բէկ Շահնշահեանց. 16) Ստեփան Քարամեանց. իւրաքանչիւրը երկու բաժին։

1) Սահակ քահանայ Տէր Սահակեանց. 2) Մկրտիչ քահանայ Սապոնջեանց. 3) Սարգիս քահանայ Փիրվերտեանց. 4) Յովհաննէս Մկրտչեանց. 5) Համբարձում Սաֆիանոսեանց. 6) Յակոբ մահտեսի Սարգսեան. 7) Գալուստ Բորրահեանց. 8) Սարգիս Աղասով. 9) Յարութիւն Սահակեանց. 10) Աղասի բէկ Պապովեանց. 11) Իսահակ Լազարեանց. 12) Հայրապետ բէկ Դարողանեանց. 13) Հայրապետ Վարդանեանց. 14) Կարապետ Մաթէոսեանց. 15) Բաբիլ Ղազարեանց. 16) Յարութիւն Քարամեանց. 17) Նիկողայոս Վարդապետեանց. 18) Յարութիւն Տէր Եսայեանց. 19) Մարտիրոս Սարուխանեանց. 20) Բաղիշ Ջանումեանց. 21) Դաւիթ բէկ Լալայեանց. 22) Պօղոս Թարրահեանց. 23) Յովհաննէս Միրզաբէկեանց. 24) Մկրտիչ Վարդանեանց. 25) Գաբրիէլ Նազարեանց. 26) Օհան Տէր Ստեփանեանց. 27) Եսայի Օվչեանց. 28) Մանսուր Զաքարեանց. 29) Սարգիս Բաղալեանց. 30) Ղազար Սէրգէյեանց. 31) Աբրահամ Գասպարեանց. 32) Բաղիշ Տէր Վարդանեանց. 33) Սահակ Տէր Ստեփանեանց. 34) Գասպար Շահնազարեանց. 35) Մկրտիչ Ներսիսեանց. 36) Աղահվերտի Միրզաբեկեանց. 37) Սարգիս Դանիէլեանց. 38) Մկրտիչ Սարուխանեանց. 39) Յակոբ բէկ Մարտանեանց. 40) Մեժլում Տէր Ստեփանեանց. 41) Բաբիլ Սահակեանց. 42) Աբրահամ Շահվերտեանց. 43) Պետրոս Արղիմանեանց. 44) Աւետիք Բալասանեանց. 45) Արզի բէկ Մարտանեանց. 46) Խաչատուր Իւզբաշեանց. 47) Աղասի Ամիրխանեանց. 48) Ջհանկիր Շահնազարեանց. 49) Բալասի Պօպովեանց. 50) Յարութիւն Բարղամեանց. 51) Կարապետ Միսերխանեանց. 52) Կարապետ Տէր Յովհաննիսեանց. 53) Յարութիւն Արէշեանց. 54) Խաչատուր Եղիազարեանց. 55) Գրիգոր Գենջեցեանց. 56) Բաղիշ Քօչարեանց. իւրաքանչիւրը մի բաժին։

1) Մարգարէ Լազարեանց իւր ընկերութիւնովը հինգ բաժին։

1) Կարապետ Մալխասեանց հատուցել է առաջին և երկրորդ մասն միոյ բաժնի։

1) Դաւիթ Սարուխանեանց. 2) Սարգիս Բուրջիխանեանց. 3) Յովհաննէս Բալայեանց. սոցա իւրաքանչիւրը հատուցել է երրորդական մասն միոյ բաժին, ընդամէնը 5 մանէթ։

Բոլորի գումարն է $173\,^2/_3$ բաժին 521 մանէթ։

Յովհաննէս Միրզաբէկեանց։

7 փետր. 1870 ամի.

Ի Շամախի։

---

## Խաչատրեան [illegible]

Ազգասիրաց առատութիւնը մի ազգի մէջ՝ նորա յառաջադիմութիւնն քայլափոխը կ'նշանակէ։ Արդ՝ թէ քանի քաղցր էր ինձ լսել 'միշտ ազգասիրաց ջերմեռանդութեան պտուղներն, որոց յիրաւի անպայման ուրախութեամբ շնորհակալութիւնս պիտի փոխարինէի գրչիս միջոցաւ։

Նոյնպիսեաց թուերու յաւելումը կ'տեսնուի նոր 'ի Նորոյ Նուխւոյ գաւառակաց մէջ. փոքր միջոցաւ յառաջ Նիժու Գալուստ Եիւզբաշին արժանաւոր գործով իւր անունը փայլեցուց ազգի մէջ. և այժմ նորա հետոց և բարեգործութեանց նախանձաւոր կ'հանդիսանան առ Գուր գետով բնակեալ Հաւարիկ գեղջ մերազնեայ ժողովուրդքը, նոր մի փառաւոր եկեղեցւոյ շինութեան ձեռնարկելով կ'փութան յաւարտ հասուցանել, ամենատեսակ ծախուց դժուարութեան տալով իրանց թիկունքը. և անշուշտ պետք էր մի այդպիսի Աստուածահաճոյ ձեռնարկութեամբ իրենց հոգևոր պէտքերը ապահով և անվրդով կատարելու Աստուածային Տաճար կանգնել, ըստ որում այս գիւղը Գուր գետին եզերքի մօտ լինելով, բաց 'ի ուրիշ մեծամեծ նիւթական վնասներ կրելէն՝ տեղական ժողովրդեան և եկեղեցւոյն որմերոյն անդարմանելի խախտուածներ պատճառուած էր։

Ժողովրդոց գեղեցիկ նպատակին օգնական և օժանդակ կ'գտնուի նոյն գիւղացի մեր սիրելի Ազգային բարեպաշտ Եղիազար Իւզբաշին՝ իւր սեպհական մեծատարած այգատեղին ձրի իւր կատարեալ ջերմեռանդութենէն ազդուած՝ նուիրեց նոյն եկեղեցւոյն, որոյ վերայ կ'հիմնուի եկեղեցին, և սկիզբն կ'առնու շինութեան. թէ և այս ձմեռնային անյարմար ժամանակումն դադարումն սաս-